



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ

*Մ. Միլասյան*  
Մ. ՄԻԼԱՍՅԱՆ

« 31 » 08 2017թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 78

**Ձեռնարկողը՝**

**<<Դորոժնիկ>> ՍՊԸ**  
ԼՂՀ Ասկերանի շրջան գ. Այգեստան

**Գործունեությունը՝**

Սպանդարյանի փուֆի և բազալփի հանքավայրի  
երրորդ(բազալփի) տեղամասի օգտակար հանածոների  
արդյունահանման շրջակա միջավայրի վրա  
ազդեցության գնահատման հաշվետվություն  
ք. Երևան

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի  
տնօրեն՝

Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

քիվ ԲՓ 78

«31» 08 2017թ.

**Սպանդարյանի տուֆի և բազալտի հանքավայրի երրորդ(բազալտի)  
տեղամասի օգտակար հանածոների արդյունահանման շրջակա միջավայրի  
վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Ձեռնարկող՝

«Դորոժնիկ» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Նախագծային փաստաթղթեր, ՇՄԱԳ

հաշվետվություն. /Ա կատեգորիա/

Սպանդարյանի տուֆի և բազալտի հանքավայրի երրորդ տեղամասը վարչական տեսակետից գտնվում է Երևան քաղաքի տարածքում:

Առաջին և երրորդ(բազալտի) տեղամասերը հարում են իրար և գտնվում Հաղթանակ(IV) գյուղից 1.5-2կմ հյուսիս արևմուտք: Երկրորդ տեղամասը գտնվում առաջին տեղամասից 1.0-1.5կմ հարավ-արևմուտք: Բոլոր տեղամասերը հողային և ասֆալտապատ ճանապարհներով միանում են Երևան-Էջմիածին ավտոմայրուղուն: Հանքավայրի շրջանը տեղադրված է Գեղամա հրաբխային լայն բարձրավանդակի հարավային սահմանի մոտ, ձգված լայնական ուղղությամբ: Շրջանի բացարձակ նիշերը տատանվում են 840-1600մ սահմաններում:

Սպանդարյանի տուֆի և բազալտի հանքավայրի 3-րդ տեղամասում բազալտները տարածված են հետախուզման ամբողջ մակերեսով և տեղադրված են ծածկույթային բազալտների սովորաշերտում: Առանձնանում են բազալտների 3 հիմնական ձևեր, որոնք իրարից տարբերվում են ինչպես արտաքին տեսքով, այնպես էլ ֆիզիկամեխանիկական հատկանիշներով, ինչը պայմանավորված է հոսքում դրանց տարբեր գենետիկական դրությամբ:

Հիդրոերկրաբանական տեսանկյունից հետախուզվող շրջանը բաժանվում է երկու մասի՝ հարթավայրային և վերսարային բարձրավանդակի: Երկրի մակերևույթ ջրերը դուրս են գալիս հազվադեպ աղբյուրների տեսքով, հատկապես ռելիեֆի ցածրադիր մասերում:

Հանքավայրի բուն տարածքը անջուր է, գրունտային ջրեր չեն հայտնաբերվել, որը հանդիսանում է դրական գործոն հանքավայրի շահագործման համար:

*Մկրտչյան ՏԿ ջրվազ*

05.05.17թ



Շրջանի կլիման չոր է, մայրցամաքային, շոգ ամառով և բավականին ցուրտ ձմեռով: Ամենացածր ջերմաստիճանը ձմռանը հասնում է մոտ  $-26^{\circ}\text{C}$ , ամռանը՝  $+40^{\circ}\text{C}$ : Տեղումների միջին քանակը տարեկան կազմում է 300մմ:

Շրջանում անտառային ծածկը բացակայում է, սակայն կան մրգատու և խաղողի այգիներ: Այստեղ զարգացած է նաև անասնապահությունը և թեթև արդյունաբերությունը:

Բուն հանքավայրի տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների և բույսերի տեսակներ չեն արձանագրվել:

Հանքավայրի 3-րդ(բազալտի) տեղամասի բազալտի 5971 հազար մ<sup>3</sup> ծավալով պաշարները հաստատվել են ՀՀ երկրաբանական վարչության ՊՏՀ կողմից՝ 28.12.1959թ. N77 արձանագրությամբ և  $A_2+B+C_1$  կարգով:

Հանքավայրի պաշարները հաստատված են որպես հումք շինարարական քարի արտադրության համար: Շինքարի ելքը որոշվել է 65.3%: Արդյունահանման թափոնները կարող են օգտագործվել 8267-95 ՀՍ-ի պահանջները բավարարող շինարարական խճի արտադրության համար:

Շահագործումը կիրականացվի բաց եղանակով՝ համապատասխան սարքավորումների օգտագործմամբ:

Ելնելով բացահանքային դաշտի և օգտակար հանածոյի տեղադրման լեռնատեխնիկական և լեռնաերկրաբանական պայմաններից բացահանքի շահագործման համար ընտրված է ընդլայնական, խորացվող միակողմանի մշակման համակարգ՝ մակաբացման ապարներն արտաքին ժամանակավոր լցակույտ տեղափոխելով(0.5հա): Ընտրված մշակման համակարգն ունի հետևյալ պարամետրերը.

- աստիճանի բարձրությունը՝ 5մ, ենթաստիճանը՝ 2.5մ,
- աստիճանի թեքման անկյունը՝  $90^{\circ}$ , վերջնական դիրքում՝  $60^{\circ}$ ,
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը՝ 20մ:

Սույն նախագծով նախատեսվում է.

- հանքավայրի մշակումը բաց լեռնային աշխատանքներով,
- բացահանքի(3-րդ տեղամաս) շահագործումը տարեկան 15700մ<sup>3</sup> բազալտների արդյունահանմամբ և իրացում տեղում,
- արդյունահանման աշխատանքների կատարում հորատասեպային եղանակով,
- մշակված տարածության լեռնատեխնիկական վերականգնում,
- բացահանքի արտադրական հրապարակում բեռնարկղային տիպի գրասենյակի և կենցաղային սենյակի տեղադրում:

Բացահանքի շահագործման 8-րդ տարվանից սկսած ժամանակավոր արտաքին լցակույտից ապարները կտեղափոխվեն բացահանքի տարածք և կհարթեցվեն:

Բացահանքի 3-րդ տեղամասի տարեկան արտադրողականությունն ընդունված է 15700մ<sup>3</sup>, բազալտի զանգվածի մարվող պաշարը՝ 420824մ<sup>3</sup>, արդյունահանվող լեռնային զանգվածի ծավալը՝ 404095մ<sup>3</sup>, իսկ մակաբացման ապարները՝ 11495մ<sup>3</sup>: Մակաբացման գործակիցը կազմում է 0.029մ<sup>3</sup>/մ<sup>3</sup>:

Նախագծված բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը.

- Առավելագույն երկարություն՝ 250.0մ,
- Առավելագույն լայնություն՝ 190.0մ,
- Մշակման խորություն՝ 26.0մ,
- Օտարման տարածքը՝ 3.5հա:

Շառայման ժամկետը կազմելու է 25 տարի:



Տեղամասը մշակվելու է բաց եղանակով, առանց հորատապայթեցման:

Բացահանքի շինարարության ընթացքում կատարվող լեռնակապիտալ աշխատանքներին վերագրվում են.

- Բացահանքի հարավային մասում մոտեցող գրունտային ճանապարհի կարգաբերում՝  $L=250մ$ ,  $B=10մ$ ,  $550մ^3$ ,
- 1005մ բարձրության նիշ ունեցող հանքաստիճանից ապարների հեռացում՝  $2975մ^3$  (այդ թվում մակաբացման ապարներ՝  $375մ^3$ , բազալտներ՝  $2600մ^3$ ),
- Արտադրական հրապարակի կառուցում՝  $625մ^3$ :

Լեռնակապիտալ աշխատանքների տևողությունը կազմում է 0.2 տարի:

Բացահանքի դաշտի սահմաններում մակաբացման ապարները ներկայացված են այլովիալ-պրոյովիալ նստվածքներով, կավերով, ավազներով, ջարդոտված բազալտներով ու խճով՝  $11495մ^3$  ընդհանուր ծավալով և 0.35մ միջին հզորությամբ:

Մեծ քարերի անջատումը զանգվածից կատարվում է հորատասեպային եղանակով՝ ՈՈ-20B հորատման մուրճերով:

Ելնելով հանքավայրի կլիմայական, լեռնատեխնիկական պայմաններից աշխատանքային ռեժիմն ընդունվում է 260օր/տարի, հերթափոխի տևողությունը՝ 8 ժամ:

Աշխատանքների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսի միջին օրեկան ծավալը կազմելու է  $0.5մ^3$ , իսկ տեխնիկական ջրինը (փոշենստեցման նպատակով)՝  $1.7մ^3$ :

Հանքավայրի շահագործման ժամանակ օգտակար հանածոյի հաստաշերտի կորուստները որոշված են 2 խմբով: Դրանք կորուստներ են, որոնք բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում ու հատակում՝ 6-7% կամ  $28224մ^3$  և շահագործական կորուստներ՝ արդյունաբերական պաշարների 0.5%:

Շրջակա միջավայրի պահպանության համար վնասակար ազդեցությունները նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- սարքավորումները թույլատրելի աշխատանքի միայն դրանց արտանետման գազերում վնասակար նյութերի թույլատրելի պարունակություն ապահովելու դեպքում, որի համար որոշ մեքենաների վրա դրվում են զտիչ սարքեր,
- փոշեառաջացման վերացման համար կիրականացվի աշխատանքային հրապարակների, հանքախորշերի, լցակույտերի, ավտոճանապարհների պարբերաբար ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- կբարեկարգվեն գոյություն ունեցող ճանապարհները,
- նավթամթերքները պահվում են բացահանքի արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն՝ ապահովելով թափված նավթամթերքների հոսքը դեպի հավաքող բետոնապատված փոսը,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալներն ու մասերը կհավաքվեն հատկացված առանձին տեղում և կհանձնվեն որպես մետաղական ջարդոն,
- մակերևութային ջրերի հոսքը դեպի բացահանքի հատակ կանխարգելելու նպատակով, բացահանքի պարագծով կանցկացվեն խրամներ և արագահոսքեր,
- կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր:



Տարածաշրջանում չկան բնապահպանական տեսանկյունից խոցելի կամ բնության հատուկ պահպանվող տարածքներ:

Բացահանքի շահագործման ժամանակ առաջացած թափոնները կպահեստավորվեն արտաքին ժամանակավոր լցակայանում (0.5հա), տեղադրված հանքավայրի տարածքում: Հանքավայրի շահագործման 8-րդ տարուց սկսած, մակաբացման ապարներն ու թափոնները կտեղափոխվեն բացահանքի մշակված տարածություն և կիրականացվի մակերևույթի ռեկուլտիվացիա:

Աշխատանքների ընդհանուր մակերեսը կլինի 3.0հա, որի համար անհրաժեշտ խոշորացված ծախսը կկազմի 1361.7 հազար դրամ:

Ամփոփելով վերոշարադրյալը, նախատեսված մի շարք բնապահպանական միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա նվազեցնելու կամ մեղմելու ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև վերահսկելու նախատեսվող աշխատանքների գործընթացը:

Օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ (կազմվել են նաև վերջիններիս արձանագրությունները), որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

#### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դորոժնիկ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Սպանդարյանի տուֆի և բազալտի հանքավայրի երրորդ տեղամասի(բազալտ) օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Մասնագետ



Ն. Ռոստոմյան